

քին մէջ կրօնաւոր եղած է Գրիգոր եպիսկոպոսէն եւ մէկ տարի յետոյ Նախիջեւան փոխադրուած է, ուր եպիսկոպոս ձեռնադրուած է 1604ին Մելքիսեդեկ կաթողիկոսէն եւ 17 տարի Կուտինայէն դուրս մնալէն յետոյ վերադարձած է Կուտինա։ Այս տեղեկութիւնները քաղուած են Էտիրնէի Ս. Թորոս եկեղեցին պահուած Աւետարանէ մը որ 1617ին գրել տուած է Յակոբ եպոս. Դէօթահիացի Էջմիածնայ Մելքիսեդեկ եւ Սոյ Յովհաննէս կաթողիկոսներուն եւ Կեսարիոյ Տ. Գրիգոր եպոս. ին օրով(*), ինչպէս նաեւ ձեռագիր Յայսմաւուրքէ մը որ Աղաւնունի եպոս. տեսած է (տե՛ս Բէ-բաճ, 1900 էջ 371)։

1604–1605 թուականներուն կը կարծուի թէ առաջնորդ եղած է Կուտինայի (նոյն) ուր ժամանակ մը պաշտօնավարելէ վերջ, Կեսարացի Գրիգոր պատրիարք կը հրաւիրէ զինքը Կ. Պոլիս ուր 1611ին Ղաւթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Ասլան գաիրին գրել կու տայ Կանոնադիրք մը (տե՛ս Մկրտիչ եպոս. Աղաւնունի. Քէ-

(*) Այս Աւետարանը այրած է 1905 Օգոստ. 15ին մեծ հրդեհին, որուն զոհ զացած են եկեղեցին եւ առաջնորդարանը։ Շատ կը ցաւիմ որ յիշատակարանը նոյնութեամբ չեմ ընդօրինակած, 1905 Մայիսին իմ Էտիրնէ այցելած տառնա։